ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

2 հունիսի 2016 թվականի **թիվ 56** քաղ. Մոսկվա

Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 288 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

Մաքսային միության մաքսային օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Մաքսային միության հանձնաժողովի՝ «Մաքսային մուտքի օրդերի ձեւի եւ մաքսային մուտքի օրդերը լրացնելու եւ կիրառելու կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 288 որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ մաքսային մուտքի օրդերի ձեւաթղթերը, որոնք, Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, համարվում են խիստ հաշվետվության տպագրական ձեւաթղթեր, պատրաստվել են մինչեւ սույն Որոշման ուժի մեջ մտնելը, կարող են օգտագործվել մաքսային մուտքի օրդերների ձեւակերպման համար մինչեւ դրանց ամբողջական սպառումը:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի հունիսի 2-ի
թիվ 56 որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 288 որոշման մեջ կատարվող

1. Մաքսային մուտքի օրդերի ձեւում եւ մաքսային մուտքի օրդերի լրացուցիչ թերթիկի ձեւում՝

ա) 9-րդ վանդակում «Մաքսատան աշխատակցի ստորագրությունը» բառերը փոխարինել «Մաքսային մարմնի պաշտոնատար անձի ստորագրությունը» բառերով.

բ) վերջին վանդակում «Մաքսատան համար նախատեսված օրինակ» բառերը փոխարինել «Մաքսային մարմնի համար նախատեսված օրինակ» բառերով:

2. Նշված որոշմամբ հաստատված՝ մաքսային մուտքի օրդերը լրացնելու եւ կիրառելու կարգում՝

ա) տեքստում՝

համապատասխան թվով եւ հոլովով «Մաքսային միության անդամ պետություն» բառերը փոխարինել համապատասխան թվով եւ հոլովով «անդամ պետություն» բառերով,

«ՄՄ ԱՏԳ ԱԱ» բառերը փոխարինել «ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ» բառերով.

բ) 2–րդ կետում՝

առաջին պարբերությունից առաջ լրացնել հետեւյալ բովանդակությամբ պարբերություն.

«2. ՄՄՕ-ն ու ՄՄՕԼ-ը ձեւակերպվում են թղթային կրիչի վրա՝ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 288 որոշմամբ հաստատված ձեւով ձեւաթղթի վրա (այսուհետ՝ ձեւաթուղթ):».

առաջին պարբերությունում՝

«2. Ձեւաթղթեր» բառերը փոխարինել «Ձեւաթղթեր» բառով.

«մաքսային միության պաշտոնատար անձի կողմից» բառերից հետո ավելացնել «(այսուհետ՝ պաշտոնատար անձ)» բառերը.

2-րդ պարբերությունից «մաքսային մարմնի» բառերը հանել.

երրորդ պարբերությունում «Մաքսային միության անդամ պետությունների» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ)» բառերով.

լրացնել հետեւյալ բովանդակությամբ պարբերություն.

«Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել ՄՄՕ-ի, ՄՄՕԼ-ի էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ձեւակերպելու դեպքերը:».

գ) 3–րդ կետում՝

1-ին ենթակետում «Մաքսային միության» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության» բառերով.

[փոփոխությունը վերաբերում է միայն ռուսերենին].

վերջին պարբերության մեջ «բեռնային մաքսային հայտարարագրի» բառերը փոխարինել «ապրանքների մասին հայտարարագրի» բառերով.

դ) 4-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. ՄՄՕ-ում հնարավոր է վճարումների հաշվարկումն այն ապրանքների նկատմամբ, որոնք, Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին (այսուհետ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) համապատասխան, դասակարգվում են ՄՄՕ-ի, ՄՄՕԼ-ի 6-րդ վանդակի 6.6 ենթավանդակը լրացնելու համար սույն կարգով նախատեսված մեկ ծածկագրով: ՄՄՕ-ի, ՄՄՕԼ-ի 6-րդ վանդակի 6.6 ենթավանդակը լրացնելու համար սույն կարգով նախատեսված ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ տարբեր ծածկագրերով դասակարգվող ապրանքների նկատմամբ վճարների հաշվարկման անհրաժեշտության դեպքում այդ ապրանքների մասին տեղեկությունները նշվում են ՄՄՕԼ-ում:».

ե) 6-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«6. ՄՄՕ-ն, ՄՄՕԼ-ը ձեւաթղթի վրա լրացնելն ուղեկցվում է ՄՄՕ-ի, ՄՄՕԼ-ի թերթիկների՝ էլեկտրոնային տեսքով կազմմամբ:

ՄՄՕ-ի, ՄՄՕԼ-ի՝ էլեկտրոնային տեսքով կազմումն իրականացվում է պաշտոնատար անձի կողմից:

Մաքսային գործառնությունների կատարումն արագացնելու համար թույլատրվում է ՄՄՕ-ի, ՄՄՕԼ-ի նախնական կազմումն էլեկտրոնային տեսքով վճարողի կամ մաքսային ներկայացուցչի կողմից: Այս դեպքում պաշտոնատար անձն ստուգում է ՄՄՕ-ի, ՄՄՕԼ-ի վանդակների՝ էլեկտրոնային տեսքով լրացման ճշտությունը, անհրաժեշտության դեպքում ավելացնում է պակասող տեղեկատվությունը, տպում ՄՄՕ-ի, ՄՄՕԼ-ի ձեւաթղթի վրա, վավերացնում անձնական համարակալված կնիքի դրոշմվածքով եւ ստորագրությամբ:».

զ) 7-րդ կետում «ՄՄՕ-ի, ՄՄՕԼ-ի էլեկտրոնային պատճենի», «ՄՄՕ-ի, ՄՄՕԼ-ի էլեկտրոնային պատճենների» բառերը փոխարինել «ՄՄՕ-ի, ՄՄՕԼ-ի՝ էլեկտրոնային տեսքով» բառերով.

է) 8-րդ կետում՝

առաջին պարբերությունում «ՄՄՕ-ում, ՄՄՕԼ-ում» բառերից առաջ ավելացնել «Ձեւաթղթի վրա ձեւակերպված» բառերը.

երկրորդ պարբերությունում՝

առաջին նախադասության մեջ «ՄՄՕ-ի, ՄՄՕԼ-ի էլեկտրոնային պատճեններում» բառերը փոխարինել «ՄՄՕ-ում, ՄՄՕԼ-ում՝ էլեկտրոնային տեսքով» բառերով.

երկրորդ նախադասության մեջ «այդպիսի ուղղում» բառերից հետո ավելացնել «ձեւաթղթի վրա» բառերը.

թ) 10-րդ կետում՝

10.1 ենթակետում՝

1-ին ենթակետի երկրորդ եւ երրորդ պարբերություններում եւ 3-րդ ենթակետի առաջին պարբերությունում «Մաքսային միության» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության» բառերով.

10.2 ենթակետի երրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Յուրաքանչյուր ՄՄՕԼ-ում նշվում է դրա հերթական համարը, ընդ որում, հաշվարկն սկսվում է ՄՄՕ-ից:».

10.5 ենթակետի չորրորդ եւ հինգերորդ պարբերություններում «Մաքսային միության օրենսդրությամբ» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով եւ ակտերով» բառերով.

10.6 ենթակետում՝

իններորդ պարբերությունում «Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի (այսուհետ՝ ՄՄ ԱՏԳ ԱԱ)» բառերը փոխարինել «ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ» բառերով.

տասներորդ պարբերությունում «միագումար վճարի» բառերը փոխարինել «միագումար մաքսային վճարի» բառերով.

տասնյոթերորդ պարբերությունում «Մաքսային միության» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության» բառերով.

10.8 ենթակետում՝

չորրորդ պարբերությունում՝

«մաքսային եւ այլ վճարների տեսակների դասակարգչին համապատասխան» բառերը փոխարինել «հարկերի, գանձումների եւ այլ վճարների տեսակների դասակարգչին համապատասխան» բառերով.

ավելացնել «, որոնք հաստատվել են Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշմամբ (Հայաստանի Հանրապետությունում մաքսատուրքի վճարման ժամանակ նշվում է 6030 ծածկագիրը՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրի թիվ 3 հավելվածի 30-րդ կետին համապատասխան):» բառերը.

ութերորդ պարբերությունում՝

«եղանակների եւ առանձնահատկությունների դասակարգչին» բառերը փոխարինել «եղանակների դասակարգչին» բառերով.

ավելացնել «, որոնք հաստատվել են Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշմամբ» բառերը.

իններորդ պարբերությունում՝

[փոփոխությունը վերաբերում է միայն ռուսերենին].

առաջին նախադասությունից հետո ավելացնել հետեւյալ բովանդակությամբ նախադասություն. «Այն փաստաթղթի (փաստաթղթերի) համարի եւ ամսաթվի վերաբերյալ տեղեկությունները, որի հիման վրա կատարվել են վճարումները, չեն նշվում անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերում:».

[փոփոխությունը վերաբերում է միայն ռուսերենին].

10.9 ենթակետի առաջին պարբերությունում «Մաքսատան աշխատակցի» բառերը փոխարինել «Մաքսային մարմնի պաշտոնատար անձի» բառերով: